ՀՏԴ 334.012.3

Լ.Հ. ԱՂԱՋԱՆՅԱՆ, Լ.Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Դիտարկվում է արդյունաբերության՝ որպես տնտեսության գերակա ճյուղի նշանակությունը տնտեսական զարգացման գործում: Ընդգծվում է ձեռնարկատիրության խթանմանն ուղղված զբաղվածության քաղաքականության կարևոր դերը: Անհրաժեշտ է համարվում զբաղվածության քաղաքականության միջոցառումների տարբերակումը նաև ըստ տարածաշրջանների՝ հաշվի առնելով առկա արտադրական և աշխատանքային ներուժը:

Առանցքային բառեր. արդյունաբերություն, ձեռնարկատիրություն, զբաղվածություն, պետական կարգավորում, տնտեսական քաղաքականություն, տարածաշրջան:

Տնտեսության բոլոր ճյուղերի ու ոլորտների համալիր զարգացումը ցանկացած երկրի համար միշտ էլ հանդիսացել է կայուն տնտեսական աճի կարևոր նախադրյալ: Սակայն ամբողջ աշխարհում իրականացվող գիտատեխնիկական առաջադիմության կտրուկ զարգացումները և տնտեսական ինտեգրման ու գլոբալացման գործընթացներն այսօր մեկ անգամ ևս շեշտում են արդյունաբերական արտադրանքի անվիճելի առաջնային դերը ժամանակակից տնտեսական աշխարհում: Արդյունաբերությունը՝ որպես տնտեսության վճռորոշ ու գերակա ճյուղ, միշտ էլ հանդիսացել է ցանկացած երկրի (զարգացած կամ զարգացող) տնտեսական վերափոխման, արագ աճի և առաջընթացի հիմնական շարժիչ ուժը: Հենց արդյունաբերության շնորհիվ է, որ 2-րդ համաշխահային պատերազմից հետո ավերումից և խոր տնտեսական անկումից կարողացան տնտեսական կայուն, իսկ այնուհետև նաև խիստ բարձր (տարեկան մինչև 15-16 %) տնտեսական աճ ապահովել ու աշխարհի հզորների շարքում դասվել Գերմանիան ու Ճապոնիան (այդ գործընթացները անվանվեցին «գերմանական հրաշք» ու «ճապոնական հրաշք»): Նաև, հիմնականում հենց արդյունաբերության շնորհիվ է, որ 20-րդ դարի վերջերին տնտեսական արդյունավետ քաղաքականության կիրառմամբ տնտեսության բոլոր գերակա ոլորտների կայուն ու արագ աճ սկսեցին ապահովել ասիական տարածաշրջանը ներկայացնող նոր ինդուստրիալ երկրները:

Հայաստանը խորհրդային իշխանության տարիներին ունեցել է հզոր արդյունաբերական ներուժ: Սակայն նախկին սոցիալիստական երկրներում 1990-ական թվականներին սկսված հասարակական-քաղաքական և տնտեսական խոր վերափոխումները, և շուկայական հարաբերություններին արագ անցման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում հանգեցրին տնտեսության կառուցվածքային նկատելի, հաճախ անկանխատեսելի փոփոխությունների: Արդյունքում՝ խիստ նվազեց արդյունաբերության դերը տնտեսությունում: 2012թ. տվյալներով՝ մեր երկրում

արտադրված համախառն ներքին արդյունքում (շուկայական գներով հաշվարկված) մշակող արդյունաբերության բաժինը չի հասնում նույնիսկ 10 % -ի (9,9%), իսկ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման բաժինը կազմում է միայն 2,9 % [1]:

Միաժամանակ նշենք, որ այսօր մեր երկրում սկսված տնտեսական բարեփոխումները և խիստ արագ զարգացող ինտեգրացիոն գործընթացները ենթադրում են միանգամայն նոր մոտեցում արդյունաբերության ոլորտի նկատմամբ: Մասնավորապես 2011թ. ՀՀ կառավարության N 49 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ ՀՀ կառավարությունը հայտարարեց նոր արդյունաբերական քաղաքականության իրականացման մասին: Ըստ որում, հստակ նշվեց, որ արդյունաբերական քաղաքականության ուղղակի թիրախը վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացումն է:

Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում արձանագրվել է, որ մեր երկրի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժը 2014-2025թթ. կդառնա արտահանումը, դրա առաջանցիկ աճը և համապատասխանաբար՝ արդյունաբերության դերի և նշանակության կտրուկ ավելացումը [2]: Բավական է նշել, որ Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում արդյունաբերությունը և արտահանման խրախուսումը դիտարկվում են որպես մեր երկրի տնտեսության առաջընթացի և հետագա աճի կարևորագույն գերակա ուղղություն (որպես այդպիսին դիտարկվում են նաև զբոսաշրջության զարգացումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը, գյուղատնտեսության և գյուղի զարգացումը, փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման և գործունեության ապահովումը):

Ցանկացած երկրի տնտեսության կառուցվածքային նման փոփոխությունները, կապված լինելով ներդրումային, ֆինանսական, տնտեսական (մասնավորապես, հարկային և մաքսային) բարենպաստ քաղաքականության իրականացման հետ, մեր կարծիքով, ամենից առաջ ենթադրում է կադրային արդյունավետ քաղաքականության մշակում և կիրառում տնտեսության կառավարման տարբեր մակարդակներում: Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում շեշտվում է, որ արդյունաբերական քաղաքականության ուղղորդող տեսլականը Հայաստանը բարձրարժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների արտադրության երկիր դարձնելն է, որի առանցքը ստեղծագործ մարդկային կապիտալն է: Այսինքն, ամբողջ տնտեսությունում պետք է մշակվեն և աստիճանաբար իրականացվեն արդյունաբերության կադրային ներուժի ձևավորմանը, որակավորման բարձրացմանն ու վերամասնագիտացմանն ուղղված կոնկրետ միջոցառումներ երկրի տարբեր տարածաշրջաններում: Հայաստանը արդյունաբերու-

թյան ոլորտում միշտ էլ ունեցել է հզոր կադրային ներուժը, և, Կարծում ենք, որ ճիշտ մշակված և իրականացված տնտեսական, իրավական, կազմակերպական և սոցիալական քաղաքականության դեպքում կարելի է վերականգնել կորցրած ավանդույթները: Ըստ որում, այսօրվա պայմաններում այստեղ վճռական դեր կարող է կատարել զբաղվածության քաղաքականության պետական կարգավորման մեխանիզմը:

Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018թթ. Ռազմավարությունում նշված է, որ ՀՀ կառավարությունը բնակչության զբաղվածության քաղաքականության շրջանակներում համապատասխան լիազոր մարմինների միջոցով իրականացնում է աշխատուժի առաջարկի և պահանջարկի հաշվեկշռության և կառուցվածքային համապատասխանության կարգավորում: Այս նպատակին են միտված աշխատաշուկայի պետական կարգավորման, աշխատանքի և աշխատավարձի, ձեռնարկատիրական, ֆինանսավարկային, տարածքային զարգացման, ներդրումային, հարկային, կրթական, ժողովրդագրական, աշխատուժի միգրացիայի քաղաքականությունները [3]:

Վերը նշված ռազմավարությունում առաջարկվող զբաղվածության քաղաքականության նոր մոդելը ենթադրում է, որ փոքր և միջին ձեռնարկությունների աջակցության ծրագրերի պլանավորման և իրականացման գործընթացները պետք է ապահովվեն շահագրգիռ պետական մարմինների համակարգված և փոխլրացնող համագործակցության հենքի վրա՝ հավասարապես հետապնդելով ձեռնարկատիրության զարգացում և կայուն զբաղվածության խթանում: Միաժամանակ, ռազմավարությունում ընդգծվում է, որ զբաղվածության պետական կարգավորման քաղաքականությունը ընթացիկ և երկարաժամկետ առումով պետք է միտված լինի տարածքային զարգացման, ժողովրդագրական և միգրացիոն պետական կարգավորման շրջանակներում իրականացվող բարեփոխումների արդյունավետ և ամբողջական ապահովմանը:

Կարծում ենք, կարևոր է, որ Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունում, որպես աշխատաշուկայի պետական կարգավորման ուղղություն, շեշտվում է այն հանգամանքը, որ աշխատանքի արժևորման և գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության խթանման, ինչպես նաև պետական աջակցության հասցեականության և արդյունավետության բարձրացման նպատակով՝ վերահիմաստավորման անհրաժեշտություն ունեն աշխատաշուկայի պետական կարգավորման ծրագրերն ու ծառայությունները:

Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018թթ. Ռազմավարությունում նաև հստակ ձևով նշվում է, որ զբաղվածության ոլորտում նախանշված ռազմավարական բարեփոխումների նպատակի իրացումը պետք է հանգեցնի ամբողջ տնտեսությունում որոշակի հիմնական արդյունքների ձեռքբերմանը: Եվ այս

տեսանկյունից լրիվ ընդունելի է ու արդարացված, որ որպես այդպիսի հիմնական արդյունք ընդգծվում է ըստ տնտեսության առանձին ոլորտների, ճյուղերի և պահանջվող մասնագիտությունների աշխատուժի ներգրավման, ինչպես նաև ինքնազբաղվածության խրախուսման պայմանների ու հնարավորությունների բարելավումը:

«Զբաղվածության մասին» ՀՀ գործող օրենքում նշվում է, որ աշխատաշուկայում անմրցունակ անձը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ունի փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության իրավունք [4]:

Վերը պարզաբանված հարցերի համատեքստում ընդգծենք, որ վերջին ժամանակաշրջանում ՀՀ կառավարությունն իրականացրել է կարևոր միջոցառումներ մեր երկրի տնտեսությունում ձեռնարկատիրության աշխուժացման ուղղությամբ: Նշենք, մասնավորապես, 2015թ. մարտին ՀՀ Կառավարության կողմից ընդունած ծրագիրը՝ ուղղված փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների աջակցությանը: Այն հիմնականում ուղղված է երկրի հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում ձեռնարկատիրական գործունեության աշխուժացմանը: Ըստ որում, ծրագրի հիմնական նպատակներից է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման միջոցով երկրի տնտեսության բազմազանեցմանը նպաստելը և զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը [5]:

Ընդհանրացնելով վերը նշված իրավական ակտերի մեջ բերված միջոցառումներն ու նպատակային հարցադրումները, կարող ենք ընդգծել, որ ճիշտ և ժամանակին է ՀՀ կառավարության այսօրվա ռազմավարությունը՝ արդյունաբերությունը դիտարկել որպես տնտեսության գերակա և կարևորագույն ոլորտ: Բնական է, որ դրան նպատակաուղղված անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ տնտեսական քաղաքականություն բոլոր, այդ թվում՝ նաև զբաղվածության ոլորտում: Ինչպես վերն ասվեց, Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունում ընդհանուր գծերով և ընդհանուր հարցադրումներով նախատեսվում են նպատակաուղղված միջոցառումների իրականացում, սակայն, կարծում ենք, որ դրանք պետք է կոնկրետացվեն և առավել հստակեցվեն: Մասնավորապես.

▪ Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունում նշվում է, որ այսօր, աշխատանքի արժևորման և գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության խթանման համար վերաիմաստավորման անհրաժեշտություն ունեն աշխատաշուկայի պետական կարգավորման ծրագրերն ու ծառայությունները: Այս տեսակետից, կարծում ենք, որ առաջարկվող միջոցառումները պետք է կոնկրետացվեն ըստ տնտեսության ճյուղերի՝ ելնելով Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի նպատակային խնդիրներից, և, որ խիստ կարևոր է, առան-

ձին շեշտված լինեն արդյունաբերության ոլորտում իրականացվող զբաղվածության քաղաքականության միջոցառումները:

▪ Զբաղվածության պետական քաղաքականությունում պետք է առաջնային դառնան հատկապես արդյունաբերությունում ձեռնարկատիրության խթանմանն ուղղված միջոցառումները, քանի որ դրանք, որպես կանոն, կնպաստեն ձեռնարկատիրության աշխուժացմանը տնտեսության նաև մյուս ճյուղերում:

▪ Ձեռնարկատիրության խթանմանն ուղղված զբաղվածության քաղաքականության միջոցառումները նպատակահարմար է, որ տարբերակվեն ոչ միայն ըստ տնտեսության հիմնական ճյուղերի, այլ նաև ըստ տարբեր տարածաշրջանների, հաշվի առնելով առկա արտադրական և աշխատանքային ներուժը: Հմոռանանք, որ, ինչպես շեշտված է նաև Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունում, զբաղվածության պետական կարգավորման քաղաքականությունը պետք է միտված լինի տարածքային զարգացման ապահովմանը:

▪ Զբաղվածության ոլորտի պետական ակտիվ քաղաքականությունը ենթադրում է, որ զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերը պետք է ավելի ու ավելի մեծ չափով հանդիսանան կառավարության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության մի անբաժանելի ու կարևոր հատվածը: Զբաղվածության ոլորտում նախանշված ռազմավարական բարեփոխումները նպատակաուղղված են ամբողջ տնտեսությունում որոշակի հիմնական արդյունքների ձեռքբերմանը: Իսկ այդ նպատակին զբաղվածության ակտիվ քաղաքականության շրջանակներում կարելի է հասնել ըստ տնտեսության առանձին ոլորտների, ճյուղերի և պահանջվող մասնագիտությունների աշխատուժի ներգրավմամբ, ձեռնարկատիրական գործունեության խթանմամբ, ինչպես նաև ինքնազբաղվածության խրախուսման համար բարենպաստ պայմանների ստեղծմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. www.armstat.am
2. Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, www.gov.am/files/docs/1322
3. Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարություն, Երևան, 2012, էջ 18:
4. ՀՀ օրենքը „Զբաղվածության մասին,, www.arlis.am
5. www.arlis.am

Л.Г. АГАДЖАНЯН, Л.Г. ХАЧАТРЯН

ПОДХОДЫ К ПОЛИТИКЕ ЗАНЯТОСТИ, НАПРАВЛЕННЫЕ НА СТИМУЛИРОВАНИЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В ПРОМЫШЛЕННОСТИ РА

В процессе экономического развития рассматривается значение промышленности как ведущей отрасли экономики. Подчеркивается важная роль политики занятости, направленной на стимулирование предпринимательства. Считается необходимым дифференцировать мероприятия политики занятости также по регионам, учитывая при этом имеющийся производственный и трудовой потенциал.

Ключевые слова: промышленность, предпринимательство, занятость, государственное регулирование, экономическая политика, регион.

L.H. AGHAJANYAN, L.H. KHACHATRYAN

APPROACHES TO THE EMPLOYMENT POLICY AIMED AT PROMOTING THE ENTREPRENEURSHIP IN THE REPUBLIC OF ARMENIA INDUSTRY

The essential role of the industry as a leading branch of economy in the process of economic development is considered. Apart from that, the importance of the employment policy aimed at developing the entrepreneurship is highlighted. It is worth to classify the measures of employment policy according to the regions as well, taking into consideration the current productive and labor potential.

Keywords: industry, entrepreneurship, employment, state regulation, economic policy, region.

УДК 005.962.13

Л.Г. АГАДЖАНЯН, О.А. ГАЛСТЯН, А.Л. АГАДЖАНЯН

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРОМЫШЛЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ

Рассматриваются понятие эффективности и современные подходы к ее оценке. Системный подход считается наиболее приемлемым. Намечены факторы и направления повышения эффективности промышленных организаций Армении. Дано определение эффективности и обосновывается необходимость применения группы критериев, характеризующих различные ее стороны.

Ключевые слова: оценка, эффективность, факторы, промышленные организации, системный подход, цель.

Введение. Понятие “эффективность” в экономической литературе трактуется неоднозначно. Его употребляют в различных аспектах. Основная задача состоит в том, чтобы выявить, каким образом, когда и при каких обстоятельствах организация действует эффективно.